Վիճել կարելի է նորա յառաջ բերած մանրամասնութիւնների եւ պնդումներից ոմանց դէմ՝ զմբեթի միջին Ասիայից արեւելեան Պարսկաստանի վերայով Միջագետք եւ Հայաստան անցնելու տեսութեան նկատմամբ, այդ փոխանցման կամուրջի իրական փաստերի անծանօթ լինելու կամ չգոյութեան պատճառով Արշակունեաց ժամանակից, բայց ըստ էութեան համոզուած ենք, որ զմբեթը Պարսկաստանից է անցել եւ արդէն գործադրւում էր Դ.–Ե. դարերում Հայաստանում: Յոյս ունենք, թէ մեր բերած փաստերն ու լուսաբանութիւնները աւելի եւս կը նպաստեն այդ տեսութեան հաստատութեան:

Թորամանեանի եզրակացութեան մեծ չափով հիմք է ծառայել Տիկորի զմբեթի արխայիկ ձեւերի հետ, նաեւ Ժ. դարի մատենագիր Յովհաննէս կաթուղիկոսի խօսքերը. «Յետ որոյ (այսինքն Հոիփսիմէի շինութեան՝ Կոմիտաս կաթուղիկոսի ձեռքով, ուրեմն 618 թուականից յետոյ, երբ շինուեցաւ այս զղջալի տաճարը) ապա քակեալ սորա զվայտայարկ զմբեթ սրբոյ Կաթուղիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի, շինէ զնա զեղեցկայարմար եւ չքնաղատես կոփածոյ քարամբք»:* Կաթուղիկէի կամ Էջմիածնի վայտայարկ զմբեթի շինութիւնը կապւում է Վահան Մամիկոնեանի շինարարութեան հետ Ե. դարում. Սեբէոսը պատմում է Վահանի մասին «եւ շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի եւ ի Դուին (Դբւնի) եւ Մղբայս եւ ի բազում տեղիս աշխարհիս Հայոց»:** Փարպեցու թղթի յառաջաբանից էլ զիտենք, որ Կաթուղիկէն, ինչպէս կոչւում էր հնում Էջմիածինը, փայտակերտ մաս է ունեցել եւ այրուել է, բայց ի՞նչ մաս էր այդ եւ նորից փայտակերտ նորոգութիւն եղա՞ւ, չգիտենք: Մեր միակ աղբիւրը Էջմիածնի զմբեթի փայտայարկ լինելու մասին մինչեւ Կոմիտաս, Յովհաննէս կաթուղիկոսն է:

Հին եկեղեցիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, թէ կտուրները քարով ծածկելու սովորութիւնը մինչեւ Է. դարը տարածուած չէր. բազիլիկ եւ զմբեթաւոր շատ շինքեր, գիտենք, ծածկուած էին կղմինդրով, պեղումներով հանուած մնացորդներից դատելով: Առաջիններից կարելի է յիշել Թասախը, ոչ ուշ, քան Ե. դարը, Երեւոյքը Զ. դար. զմբեթաւորներից Պոգոսվանքը Զ. դարի առաջին կիսում, Օձունը Ե. դարի վերջում. Աշտարակի Կարմրաւոր Աստուածածինը, Է. դարի առաջին քառորդից ոչ ուշ, զմբեթաւոր եւ դրսից խաչաձեւ,* որ մինչեւ այժմ էլ պահել է այդ ձեւը: Ունենք եւ մատենագրական մի թանկագին տեղեկութիւն Կաղանկատուացու մէջ, որից պէտք է եզրակացնել, թէ զմբեթները շինւում էին նաեւ աղիւսից «եւ ոչ կարէր քակել (Վարազ Փերոժ իշխան Առանշահիկ) զաղիւսաշար պոյր զազաթ զմբեթին, սակս զի բնակեալ էր անդ խաչն տէրունական եւ նշխարք վկայիցն»:**

Բայց ընդունենք կատարելագոյն պատմական Յովհաննէս կաթուղիկոսի տեղեկութիւնը. մի օրինակից հանած եզրակացութիւնը սայթաքում չէ՞ մեթոդիկ ուսումնասիրութեան պահանջների դէմ: Էջմիածնի զմբեթի փայտայարկ շինութիւնը անդիտութեան հետեւա՞նք էր, չէր կարող եւ ուրիշ պատճառ լինել. 1915 թուի երկրաշարժից խպտա խախտուեցաւ նոյն տաճարի հարաւային փոքր զմբեթը, եզիպտար կաթուղիկոսի շինած. ճարտարապետ Թորամանեանցը կամենում էր փոխարինել այն փայտաշէն զմբեթով, վախենալով, թէ հնուց ճեղքուած պատը կարող է չդիմանալ քարաշէնի ծանրութեան. եթէ իրագործէր նա իւր միտքը, ապագայում իրաւունք կը լինէ՞ր մտածելու, թէ զմբեթ շինել չգիտէին Հայերը:

Թորամանեանցն անշուշտ, այդ տոկերը չէր գրել, եթէ այդ ժամանակ տեսած լինէր զմբեթաւոր Աւանը Քանաքեռի մօտ, Զ. դարի վերջերում կամ Է.–ի սկզբում, Մովսէս Եղուարդեցու հակաթոռ Յոհան Կարնեցու կողմից, եւ մանաւանդ Պոգոսվանքը աւելի հին: Գուցէ եւ այդպիսի հոգեբանութեան հետեւանք էր, որ Տիկորի զմբեթը համարում է յետոյ աւելացրած բուն շինքի վերայ, համարելով միւնոյն ժամանակ ամենահին մնացորդը հայ զմբեթի: Տարբերզարար Պոգոսվանքի զմբեթից շատ քիչ մաս է մնա-

*Յովհաննէս Կաթուղիկոս. եր. 75. Թիֆլիսի հրտ.:

**Սեբէոս. եր. 46. Պոլսի հրտ.:

*Պատկերը տես Die Baukunst. եր. 11:

**Կաղանկատուացի. եր. 192. Շահնազարեանցի հրտ.: